

գրեց դատակնիքը եւ զզուանօք ըսաւ. «Թող  
աքսորուի Սարգիս ուր տեղ որ Յակոբ կ'ուզէ:»

Յաջորդ առտու ձիաւոր չափ մը այս  
հրովարտակը Ռոտոսթոյ տարաւ, ուր հասնելով  
լսեց թէ Սարգիս մեկնած է անկէ. իսկոյն տեղե-  
կացուց արքունի Գրան, եւ ծանոյց թէ նոր հրա-  
մանի կը սպասէ: Ղասն զի Սարգիս իւր նախա-  
տական թուղթը զրկելէն ետեւ՝ փութաց ի  
Կ.Պոլիս, նոյնին ազգեցութիւնը մեղմելու նպա-  
տակաւ, եւ նաւով հասաւ ի Կ.Պոլիս այն իրի-  
կուն՝ երբ իւր վճիռն Պոլսէն ճամբայ ելած էր:  
Սարգիս անտեղեակ անցածին՝ իջեւանեցաւ Էջ-  
միածնի նուիրակ Սիմէոն Ղարդապետին քով, որ  
յետոյ Էջմիածնի կաթողիկոս եղաւ (1763—  
1780): Սիմէոն այն միջոցին Սամաթիոյ Ս. Գէորգ  
եկեղեցւոյն մէջ Էջմիածնի համար նուէր կը  
հաւաքէր, եւ անգիտակ էր բոլորովին Սարգսի  
գործին: Ուրախութեամբ հիւրընկալեց զՍար-  
գիս նոյն գիշերը, մինչդեռ լրտես մը փութաց  
Յակոբին իմացուց: Յակոբ նոյն գիշերը կաշառե-  
լով չափ մը պաշտօն՝ հրովարտակին օրինակն առաւ,  
եւ յաջորդ օրը կանուխ Գոնէն ուրիշ չափ  
մը հրամայուեցաւ, որ Սարգիսն՝ ուր որ գտնէ  
ձերբակալէ, եւ տանի հոն, ուր առաջին չափ  
կը գտնուի: Այս նոր չափն հրովարտակն  
առած մինչդեռ նաւակով Սամաթիա կ'երթար,  
Սարգիս նաւակով Պոլիս կու գար, երբ Պոյ-  
ճըւր Գեօրգի մտա իրարու մտեցան, լրտեսը  
չաւուշին իմացուց, թէ «այս է Սարգիսը, բռնե-  
ցէք:» Չափն իսկոյն զՍարգիս իր նաւն առաւ,